

Սիրելի հայրենակիցներ,

Տարի մը եւս բոլորեցինք միասնաբար դիմագրաւելով դժուարութիւններ ու ակնատես եղանք մեր փոքրիկ երկրին մէջ տիրող եւ օր ըստ օրէ սաստկացող տրնտեսական տագնապին: Ինչպէս ամէն տարի սովորութիւն դարձուցած են, հաշուեյարդար մը ընելով եւ ետդարձ ակնարկ մը նետելով մեր գործունէութեան վրայ, ընդհանուր առմամբ կրնամ ըսել, թէ երեսփոխանական Գրասենեակի աշխատանքները հաստատ եւ սովորական յաջողութիւն արձանագրեցին ու պիտի շարունակեն իրենց ընթացքը, հակառակ ստեղծուած արտակարգ իրավիճակին ու կառավարական պաշտօնեաներու եւ օրէնքներու յարատեւ փոփոխութեան:

Վերջին մի քանի տարիներուն, Եւրոմիութեան շատ մը երկիրներու մէջ տիրող տնտեսական ճգնաժամին ստեղծած քառսէն՝ զերծ չմնաց նաեւ Կիպրոսը: Թէեւ սպասելի էր այս մէկը, բայց կ'ուզէինք հաւատալ, թէ կարող ենք շրջանցել այդ հանգրուանը եւ նուազագոյն վնասով դուրս գալ անբաղձալի վիճակէն: Մեր փափաքը սակայն իրականութեան չէր համապատասխանէր: Թէ՛ տնտեսական ոլորտէն ներս եւ թէ քաղաքական գետնի վրայ առ այժմ կը տիրէ



լուրջ անկայունություն: Ինչպես գիտեք, Փետրուար 2013-ին տեղի պիտի ունենան նախագահական ընտրություններ, իսկ տնտեսական իրավիճակի բարելաւումը կը կարօտի երկար տարիներու վրայ երկարող պետական պիտճէի կըր-ճատումներու եւ շարք մը ուրիշ միջոցներու գործադրման: Դեկտեմբեր ամսուան մէջ, Կիպրոսի խորհրդարանը իր գումարած լիազումար նիստերուն ընթացքին, տքնաջան աշխատանք տարաւ եւ քուէարկեց օրինագիծեր, որպէսզի կարելի ըլլայ օգտուիլ Եւրոպական Աջակցութեան Ֆոն-տին տրամադրած օժանդակութենէն, փրկելու համար ան-դունդի ծայրը հասած Կիպրոսի փոքր տնտեսութիւնը: Առ ի գիտութիւն բոլորիդ, Ծանօթանանք Կիպրոսի Զանրապե-տութեան Օրէնքներուն բաժինով, ամփոփ կէտերու մէջ ձե-զի կը ներկայացնենք քուէարկուած օրինագիծերէն ամե-նակարեւորները, որպէսզի լաւատեղեակ ըլլաք առնուած նոր որոշումներէն եւ ըստ այնմ դասաւորէք ձեր առօրեան ու գալիք տարիները:

Ինչ կը վերաբերի Սուրիոյ կացութեան, ամէնօրեայ դրու-թեամբ կը հետեւիմ տիրող ցաւալի քաղաքական իրադար-ձութիւններուն: Լիբանանի քաղաքացիական պատերազ-մի հետքերը տակաւին չվերացած, անարդար ճակատագի-րը հարուածեց հայաշատ գաղութ մը եւս, որ երկար ամիս-ներէ ի վեր կ'ապրի ճգնաժամային պահեր: Սփիւռքի շատ մը գաղութներ եւ Զայաստանի Զանրապետութիւնը, ճիգ չեն խնայեր օգնութեան ձեռք երկարելու մեր քոյրերուն ու եղբայրներուն, իւրաքանչիւրը իր կարողութեան համա-ձայն: Սակայն, հարցը կը շարունակուի եւ հակամարտու-թիւնը օր ըստ օրէ աւելի կը սաստկանայ: Սուրիոյ ապա-գան կը մնայ անորոշ եւ նոյնիսկ տիրող իրավիճակը կրնայ աւելի բարդանալ, ընդգրկելով շրջակայ երկիրները: Զայ ժողովուրդը, իր բոլոր ուժերով պէտք է սատար հանդիսա-նայ Սուրիահայութեան, նիւթապէս եւ բարոյապէս, որպէս-

զի անոնք կարողանան դիմագրաւել իրենց դիմաց ցցուած ահռելի դժուար կացութիւնները:

Այս նպատակով, Կիրակի, 27 Յունուար 2013ին, երեկոյեան ժամը 6:00ին, միացեալ կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան եւ Երեսփոխանական Գրասենեակին, տեղի պիտի ունենայ գեղարուեստական երեկոյ՝ մասնակցութեամբ Կիպրահայ արուեստագէտներու, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ, որու հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Սուրիահայութեան կարիքներուն: Հետեւաբար, կոչ կ'ընենք բոլորիդ անխտիր, ներկայ գտնուելու այս բարեսիրական բնոյթ ունեցող միջոցառումին: Իսկ Սուրիահայութեան կը մաղթենք ուժ եւ կորով, ինչպէս նաեւ համբերութիւն, շրջանցելու այս ծանր օրերն ու ամիսները: Յուսահատելու չեն, այլ ապագայի լաւ օրերու հեռանկարով պէտք է շարունակեն տոկալ՝ ապրելու ու գոյատեւելու համար:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ միասնաբար թեւակոխենք Նոր Տարին նոր յոյսով եւ նոր տեսլականներով:

Վարդէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Կիպրահայ գաղութի կեանքէն

Ուրբաթ, 5 Յոկտեմբեր 2012-ին, Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ եւ բացոււնը կատարեց Յամահայկական խաղերու Յամաշխարհային Գործադիր Կոմիտէի ընդհանուր ժողովին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Palm Beach պանդոկին մէջ, ներկայութեամբ Յայաստանի Յանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ ու Լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաշեանի եւ KOA-ի ներկայացուցիչին: Իսկ յաջորդ օրը Շաբաթ, 6 Յոկտեմբերին, Յամահայկական խաղերու Յամաշխարհային Գործադիր Կոմիտէի ժողովականները հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը:

Շաբաթ, 13 Յոկտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի 40ամեայ Յոբելինական հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Նարեկ Վարժարանի սրահին մէջ, հովանաւորութեամբ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն. Եորդոս Տիմոսթնուսի եւ նախագահութեամբ Պրն. Վարդգէս Մահտեսեանի: Այս ուրախ առիթով, Պետական Ներկայացուցիչը իր պատգամը յղելով Յոգաբարձական կազմին, Տնօրէնութեան, ուսուցչական կազմին, ծնողներուն եւ աշակերտութեան, ընդգծեց այս միակ հայկական կրթօճախին կարեւորութիւնը եւ անգամ մը եւս արտայայտեց իր պատրաստակամութիւնը՝ յարատեւ թիկունք կանգնելու այս կառոյցի գոյատեւման ու զարգացման:

Չորեքշաբթի, 17 Յոկտեմբեր 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Հ.Ս.Ը.Մ-Հ.Ե.Ս.ի կազմակերպած մենախօսութեան երեկոյին, մաս-

նակցութեամբ երգիծաբան Վահէ Պէրպէրեանի, որ տեղի ունեցաւ Փասիտիի սրահին մէջ:

Չորեքշաբթի, 7 Նոյեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու Լառնաքայի Հայ Ակումբ, ուր այցելեց Լառնաքայի քաղաքապետ Պրն. Անտրէաս Լուրուճիատիսը:

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2012-ին, Պետական ներկայացուցիչը ու իր տիկինը յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գրտնուեցան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Օրուայ առիթով կազմակերպուած հրապարակային ասուլիսին, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի սրահէն ներս:

Կիրակի, 25 Նոյեմբեր 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղի օրհնութեան արարողութեան:

Կիրակի, 2 Դեկտեմբեր 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան ՀՕՄ-ի կազմակերպած Հայկական Փառատօնին, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի սրահին մէջ:

Հինգշաբթի, 20 Դեկտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ իր տիկնոջ, ներկայ գրտնուեցաւ Լառնաքայի Նարեկ Վարժարանի Կաղանդի հանդէսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Ուրբաթ, 21 Դեկտեմբեր 2012-ին, Պրն. Մահտեսեանն ու տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի Կաղանդի հանդէսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Կիրակի, 23 Դեկտեմբեր 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Երգչախումբերու կատարողութեամբ՝ Ամանորեայ եւ Ս. Ծննդեան համերգին, որ տեղի ու-

նեցաւ եկեղեցւոյ մէջ:

Երեքշաբթի, 25 Դեկտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Անուանակոչութեան արարողութեան եւ մատաղի օրհնութեան:

Նոյն օրը երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Ղ.Ե.Ս.-ի տարեկան պարահանդեսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Lemon Park» սրահին մէջ:

Դասախօսութիւն



Չորեքշաբթի, 28 Նոյեմբեր 2012-ի երեկոյեան, Առաջնորդարանի «Վ. Իւթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ շահեկան դասախօսութիւն-գրոյց մը, միւթ ունենալով «Եւրոպական Օժանդակ Մեքանիզմ. Անդրադարձ՝ Զարգացման եւ Աշխատանք ապահովելու վրայ»: Օրուայ դասախօսն էր, նախկին Տնտեսութեան Նախարար Պրն. Միխայիլ Սարրիս:

Նկատի ունենալով Կիպրոսէն ներս տիրող տնտեսական ճգնաժամը եւ ի մտի ունենալով ներկայ սերունդին դիմագրաւած աշխատանք ապահովելու դժուարութիւնները, յարմար նկատեցինք երիտասարդները եւ գաղութի անդամները տեղեկացնել տիրող պայմաններուն եւ անոնց պատճառ հանդիսացող երեւոյթներուն մասին:

Մասիս Տէր Բարթող ներկայացնելէ ետք Պրն. Սարրիսը որպէս մասնագէտ եւ քաջածանօթ տնտեսագէտ, դասախօսութիւնը սկսաւ մօտ 120 անձերու ներկայութեան: Պրն. Սարրիս նախ անդրադարձ մը կատարեց համաշխարհային տնտեսութեան անկումին, Կիպրոսի դրամավարկային համակարգին հասցուցած վնասին ու անոր հետեւանքներուն մասին: Ապա, ան շարունակեց ըսելով, թէ շատ ծանր իրավիճակներ կրնան ստեղծուիլ երկրէն ներս, սակայն այս կացութենէն դուրս գալու միակ միջոցը խնայողութեան դիմելն է եւ յարգել՝ Թրոյքայի կողմէ մեզի թելադրուած պայմանները, որպէսզի կարելի ըլլայ օգտուիլ եւրոպական օժանդակութենէն եւ վերականգնել տնտեսութիւնը:



Դասախօսութենէն ետք տեղի ունեցաւ զրոյց, որմէ ետք Պետական Ներկայացուցիչը շնորհակալութիւն յայտնելով Պրն. Սարրիսին, անոր նուիրեց յուշանուէր մը: Ձեռնարկէն ետք տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ

Հինգշաբթի, 1 Նոյեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Խուլէրու դպրոցի տարեկան մրցանակաբաշխութեան ձեռնարկին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Չորեքշաբթի, 5 Դեկտեմբեր 2012-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան պաշտօնապէս հրաւիրուելով Սլովաքիոյ դեսպան Ն.Վ. Տիկին Աննա Թուրինիչովայի կողմէ, ներկայ գտնուեցաւ Սլովաքիոյ դեսպանատան մէջ տեղի ունեցած հանդիպումին, որուն հրաւիրուած էին Թուրք Կիպրացի եւ Յոյն Կիպրացի քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ UNDP-ACTի կողմէ Պրն. Քրիստոֆըր Լուիզ: Այս հանդիպումին նպատակն էր քննարկել Վիքթորիա փողոցի վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ համալիրի վերջին իրադարձութիւնները: Ներկաները ուշադրութեամբ ունկնդրեցին Պետական Ներկայացուցիչին զեկուցումը, որ մանրամասնութեամբ ներկայացուց եղելութիւններու հոլովոյթը ու ներկայ իրավիճակը, խնդրելով անոնց աջակցութիւնը:

Չորեքշաբթի, 12 Դեկտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու Կիպրոսի Պետական Հեռուստարձնկերութեան նախագիծերու բաժանմուքի նախկին պատասխանատու աշխատակից եւ պատմաբան Պրն. Անտրոս Փաւլիտիսի վաստակին նուիրուած երեկոյին, որ տեղի ունեցաւ RIK-ի նորակառոյց սրահին մէջ: Յիշեցնենք, թէ Պրն. Փաւլիտիս Երեսփոխանական

Գրասենեակի նախաձեռնութեամբ պատրաստուած «Ջայերը Կիպրոսի մէջ» վաւերագրական ժապաւենին արտադրիչն է:

Երկուշաբթի, 17 Դեկտեմբեր 2012-ին, Պրն. Մահտեսեան հեռաձայնային կապ հաստատելով Կիպրոսի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Դեսպան Ն.Վ. Ճոն Քոնիկի հետ, իր ու Կիպրահայութեան վշտակցութիւնը յայտնեց, Connecticut նահանգի դպրոցներէն մէկուն մէջ տեղի ունեցած արիւնալի ոճրագործութեան կապակցութեամբ, որ խլեց անմեղ երեխաներու կեանքեր:

Չինգշաբթի, 20 Դեկտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը, ներկայ գտնուեցան Կոյրերու դպրոցին մէջ տեղի ունեցած Կաղանդի հանդէսին:

«Նանոր» Մանկապատանեկան Պարախումբ



Շաբաթ, 22 Դեկտեմբեր 2012-ին, Նարեկ Վարժարանի սրահին մէջ, հերթական փորձէն ետք, տեղի ունեցաւ ականդակաւ դարձած «Նանոր» մանկապատանեկան պա-



րախումբի Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առիթով հաւաքույթը: Փոքրիկները հաճելի պահեր անցուցին ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչին, իր տիկնոջ ու ծնողներուն: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց երեխաներուն, անոնց լուրջ եւ հետեւողական մասնակցութեան համար, նշելով թէ այս տարուայ թիւի յաւելումը (մօտ 50 հոգի), ամենամեծ ապացոյցն է, թէ միասնաբար եւ քով քովի գալով կրնանք իրագործել մեծ նպատակներ: Շարունակելով խօսքը՝ Պետական Ներկայացուցիչը իր շնորհակալութիւնը յայտնեց վերջերս Յայաստանէն հրաւիրուած համբաւաւոր պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանին, անոր ցուցաբերած համբերութեան ու զոհողութեան համար: Ապա, տեղի ունեցաւ կադանդէքի բաշխում, որմէ ետք պարախումբի անդամները գոհունակութեամբ մեկնեցան սրահէն:

Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն



Երկուշաբթի, 24 Դեկտեմբեր 2012-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Սահտեսեաններ, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նուէրներով պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը:



Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետության Օրէնքներուն

Ներկայացուցիչներու Տան Վաւերացուցած Օրինագիծեր - Դեկտեմբեր 2012

Ներկայացուցիչներու տունը Դեկտեմբեր ամսուայ լիագումար նիստերուն ընթացքին, քուէարկութեամբ վաւերացուց պետական յատկացումներու նուազումներ կամ ջրնջումներ, ինչպէս նաեւ նոր հարկադրումներու շարք մը, որոնցմէ հիմնականները ամփոփ ձեւով կը նշենք ստորեւ.-

- Բոլոր ընկերութիւնները, որոնք արձանագրուած են Կիպրոսի Ընկերութիւններու տոմարին մէջ, ըլլան անոնք գործօն կամ ոչ, 2013-էն սկսեալ տարեկան €350 արժողութեամբ տուրք պիտի վճարեն

- Հանգստեան թոշակի իրաւունք ունենալու համար, 2013 Ապրիլէն սկսեալ, ներդրումի ընդհանուր տարիները 10-էն պիտի բարձրանայ 15 տարիներու

- 01.01.2013-էն սկսեալ կը ջնջուի ամուսնութեան առթիւ տրուած նպաստը

- 01.01.2014-էն սկսեալ Ընկերային Ապահովագրութեան մասնակցութեան գումարը 1% յաւելում պիտի կրէ, թէ գործատէրին եւ թէ պաշտօնէային մասնակցութիւններուն վրայ, այսինքն 6.8%-էն պիտի բարձրանայ 7.8%-ի

- 30% նուազում պիտի կրե թաղման ծախսերուն դիմաց տրուած յատկացումը
 - Նուազում մայրութեան յատկացումին 75%-էն 72%-ի
 - Նուազագոյն հանգստեան թոշակը կը մնայ անփոփոխ մինչեւ 31.12.2016 թուականը, այսինքն՝ €336.28
 - 14.01.2013-էն Աւելցուած Արժէքի Տուրքը (VAT) 17%-էն պիտի բարձրանայ 18%-ի եւ 13.01.2014-էն սկսեալ պիտի բարձրանայ 19%-ի: Իսկ 13.01.2014-ին նուազագոյն արժէքի տուրքը 8%-էն պիտի բարձրանայ 9%-ի: Սնունդի, դեղօրայքի եւ փոխադրամիջոցի արժէքի տուրքը կը մնայ 5%, այսինքն՝ անփոփոխ
 - Մայրական նպաստի ջնջում
 - 01.01.2014-էն սկսեալ Զաւակի յատկացումի 9% նուազում
 - OPAP-ի բախտախաղերու եւ Պետական վիճակախաղի €5000-էն վեր շահած գումարներու վրայ 20% հարկադրում (Tax)
 - Տարեկան յաւելումի սառեցում պետական պաշտօնեաներու եւ պաշտօնակատարներու անսականներու եւ թոշակներու
 - Կեանքի սղաճի (ATA) սառեցման շարունակում մինչեւ 2016 թուական
 - Ուսանողական յատկացումի նուազում ըստ ընտանեկան եկամուտի նախապէս €100,000-էն այժմ՝ €59,000-ի
 - 01.01.2013-էն սկսեալ յաւելում վառելանիւթի լիթրին վրայ 7 սենթ, իսկ 01.01.2014-էն սկսեալ յաւելեալ յաւելում 5 սենթ լիթրի վրայ
 - Աշխատանքի ժամերու փոփոխութիւն պետական պաշտօնէութեան 01.01.2013-էն սկսեալ մինչեւ 31.08.2013 առաւօտեան ժամը 7.30/8.30 մինչեւ 15.00/16.00 եւ ջնջում Զորեքշաբթի կէսօրէ ետք ժամերու: Իսկ 01.09.2013-էն ըսկսեալ առաւօտեան ժամը 8.00/9.00 մինչեւ 15.30/16.30

• Արտակարգ տուրք անձնական հատուածի պաշտօնեաներու եւ անձնական գործ ունեցողներու: -

Արտակարգ տուրք անձնական հատուածի 2012-2013:

€2,500 գէրօ մասնակցութիւն, €2,501 մինչեւ €3,500 2.5%, €3,501 մինչեւ €4,500 3% եւ €4,501 վեր 3.5%

Արտակարգ տուրք անձնական հատուածի 2014-2016:

€1,500 գէրօ մասնակցութիւն, €1,501 մինչեւ €2,500 2.5%, €2,501 մինչեւ €3,500 3%, €3,501 վեր 3.5%

Վերոնշեալ արտակարգ տուրքը պիտի վճարուի կէս առ կէս գործատիրոջ եւ պաշտօնեային կողմէ:

• Արտակարգ տուրք ընդհանուր կառավարական պաշտօնակատարներու, պաշտօնեաներու եւ թոշակառուներու: -

Արտակարգ տուրք կառավարական հատուածի 2014-2016:

€1,500 գէրօ մասնակցութիւն, €1,501 մինչեւ €2,500 2.5%, €2,501 մինչեւ €3,500 3%, €3,501 վեր 3.5%

• 01.12.2012-էն սկսեալ, բոլոր կառավարական պաշտօնեաներու անսականները կրճատուած են հետեւեալ ձեւով: -

| | |
|----------------------|-------|
| Մինչեւ €1,000 | գէրօ |
| €1,001 մինչեւ €1,500 | 6.5% |
| €1,501 մինչեւ €2,000 | 8.5% |
| €2,001 մինչեւ €3,000 | 9.5% |
| €3,001 մինչեւ €4,000 | 11.5% |
| €4,001 վեր | 12.5% |

01.01.2014-էն սկսեալ բոլոր կառավարական պաշտօնեաներու համախառն անսականները եւ թոշակները, անկախ չափանիշէն, պիտի նուազին առաւել 3% ով

• Տուրքի յաւելում ծխախոտի եւ ոգելից ըմպելիներու արտադրութիւններուն վրայ: Ծխախոտի յաւելում միջին հաշուով 20 սենթ տուփի վրայ



«Մենք կ'երգենք Ձեզի համար»

Սուրիահայութեան Նուիրուած Համերգ

Մասնակցութեամբ
Կիպրահայ Արուեստագէտներու

Միացեալ Կազմակերպութեամբ՝
Ազգային Իշխանութեան եւ
Երեսփոխանական Գրասենեակին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 27 Յունուար 2013 ժամը 18:00ին
Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ

Մուտքի Նուէր €10

Տոմսերը ապահովել
Երեսփոխանական Գրասենեակէն Հեռ. 22-454540

Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ

Կը շնորհաւորեն Կիպրահայուութիւնը
եւ մեր հայրենակիցները
Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդին առիթով,
մաղթելով առողջութիւն եւ
երջանկութիւն,
իսկ մեր զոյգ հայրենիքներուն՝
խաղաղութիւն եւ բարգաւաճում

ԿԻՊՐԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42
Ել. Յասցէ office@armenianmp.com
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42
Ել. Յասցէ vmahdessian@parliament.cy